ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **13.09.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձի և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ՉԱԼՍՏՅԱՆ /:

2. Հայաստանի պետական ագրարային համալսարանի հեռակա ուսուցման 2012 թվականի նպատակային ընդունելության մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

3. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներին դիզվառելիք, ազոտական պարարտանյութ տրամադրելու և առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման գործընթացի մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

4. ՀՀ Արագածոտնի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման աշխատանքների կազմակերպման և արդյունքների մասին:

/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

5. 2012 թվականի սեպտեմբերի 23-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների պատշաճ և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան անցկացնելու մասին/ ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/:

6. ՀՀ Արագածոտնի մարզում սեպտեմբերի 21-ին Անկախության օրվան նվիրված միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու մասին / ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/:

7. Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

--- Մարզպետը առաջնային համարեց սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի բարձր կազմակերպվածությամբ իրականացումը: Նա համայնքների ղեկավարներին հորդորեց մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ դիզվառելիքի, պարահանյութի ձեռքբերման, աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման ծրագրերին, կազմակերպված իրականացնել գյուղատնտեսական մթերքների իրացումը՝ օգտագործելով տեղի մթերակայանների հնարավորությունները:

Մարզպետը խոսեց նաեւ 84 հայանքում սեպտեմբերի 23-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների մասին՝ հորդորելով բոլոր համայնքներում ապահովել հանգիստ, արդար եւ թափանցիկ ընտրություններ:

Քննարկվեց նաեւ սեպտեմբերի 21-ին Անկախության տոնին նվիրված միջոցառման կազմակերպման հետ կապված հարցը:

Նիստում քննարկվեց համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման եւ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձի, սոցվճարների պարտքերի մարման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաեւ համայնքներին դիզվառելիք, ազոտական պարարտանյութ տրամադրելու եւ առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման, գյուղատնտեսական մթերքների մթերման աշխատանքների կազմակերպման գործընթացներին վերաբերող խնդիրները:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու.Ազատյանին

--- 10 օրվա ընթացքում հավաքագրել դիզելային վառելիքի և ազոտական պարարտանյութի պահանջվող քանակի գումարները:

Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ն. Գալստյանին

--- 10 օրվա ընթացքում կատարել ուսումնասիրություններ այն համայնքներում,որտեղ հողի հարկի,գույքահարկի և սոց.վճարների հավաքագրման ցուցանիշները ցածր են:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ